ՀՈՎՍԵՓ ԼԱԶՅԱՆ

Գ. Հ. ՕՀԱՆՅԱՆ

Հովսեփ Գերասիմի Լազյանը ծնվել է 1888 թ. հունիսի 7-ին, Թիֆլիսի Նահանգի Ախալցխա քաղաքում, հացթուխի ընտանիքում։ Երկու տարի սովորել է տեղի ուսումնարանում։ Ուսման պակասը լրացրել է ինքնակրթությամբ։ Տնտեսական ծանր պայմանները նրան հարկադրում են 9 տարեկան հասակում աշխատանքի ընդունվել տպարանում։ Տպագրական աշխատանքին զուգընթաց նա հետևողականորեն զբաղվում է ինքնազարգացմամբ։ Հ. Լազյանի հեղափոխական հայացքների ձևավորման գործում վճռական դեր են խաղացել նրա ավագ եղբայրները, Ախալցխա աքսորված սոցիալ-դեմոկրատները, ուսանող ընկերները, հեղափոխական ռուս զինվորները։

Հ. Լազյանը 1905 թ. հարում է Ախալցխայում կազմակերպված սոցիալ-դեմոկրատական խմբի բոլշևիկյան թևին։ Նա աշխատավորների շրջանում պրոպագանդում է համերաշխություն, բացատրում ՌՍԴԲԿ ծրագիրը։ Նա միաժամանակ հեղափոխական գրականություն էր տարածում տեղի զինվորական կայազորում, տպագրում կուսակցական գաղտնի փաստաթղթեր, բանվորներին զործադուլի կոչում։

1905 թ. Ախալցխայի բանվորական առաջին գործադուլին ակտիվ մասնակցելու համար Հ. Լազյանը հեռացվում է աշխատանքից։

1907 թ. ամռանը Ախալցխայում կազմակերպվում է ՌՍԴԲԿ կազմակերպություն, որի անդամներից էր Հ. Լազյանը։ Նա այստեղ բոլշևիկյան խմբի հիմնադիրներից մեկն էր։ Խումբը կապեր էր պահպանում Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության հետ, ստանում ցուցումներ, հեղափոխական ընդհատակյա աշխատանքներ կատարում կայազորի զինվորների շրջանում[1]։

Հեղափոխական գործունեության պատճառով Հ. Լազյանը 1908 թ. վերջերին զորակոչվում է բանակ և ուղարկվում Մերձբալթիկա։ Զինվորական ծառայության մեծ մասը նա անց է կացնում Ռիգայում, ուր կապ է հաստատում ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների հետ և հեղափոխական աշխատանք է տանում զինվորների շրջանում։

1912 թ. սկզբներին նա ավարտում է զինվորական ծառայությունը և հեղափոխական աշխատանքներ կատարելու նպատակով մնում Ռիգայում։ Աշխատանքի է անցնում Միլլերի մասնավոր տպարանում, որպես հավաքող բանվոր և անդամագրվում «Կուլտուրական կենտրոն» բոլշևիկյան կազմակերպությանը[2]։

Մերձբալթյան երկրամասում այդ ժամանակաշրջանում կազմակերպվում էին բանվորական ակումբներ։ Հ. Լազյանը անդամագրվում է գրեթե բոլոր նո-

---

1 *Տե՛ս Կիրովականի երկրագիտական թանգարան (այսուհետև՝ Կիրովականի թանգարան), Հ. Լազյանի գործ, թ. 17։*

2 *Նույն տեղում։*

բակազմ ակումբներին, մասսայական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք ծավալում բանվորների շրջանում։

1912 թ. Ռիգայում և ամբողջ Մերձբալթիկայում տեղի է ունենում ընդհանուր գործադուլ, որին մասնակցելու համար Հ. Լազյանը հեռացվում է աշխատանքից։ Մի քանի ամիս անց՝ նրան հաջողվում է աշխատանքի անցնել «Մերձբալթյան երկրամաս» թերթի տպարանում[3]։

Հ. Լազյանը որպես «Օբրազովանիե» բանվորական ընկերության անդամ 1912—1913 թթ. Ռիգայի բանվորական միտինգներում և գաղտնի ժողովներում բազմիցս ելույթներ է ունենում։

Այդ ժողովներից մեկում նա ընդարձակ զեկուցում է կարդում Ա. Բերելի կյանքի ու հեղափոխական գործունեության մասին։

1913 թ. օգոստոսին ոստիկանության պահանջով նա հեռացվում է աշխատանքից և արտաքսվում Ռիգայից[4]։

Հ. Լազյանը կուսակցական ընկերների աջակցությամբ մեկնում է Գերմանիա և դառնում ականավոր հեղափոխական Ա. Կասպարովի ղեկավարությամբ գործող Պիրոգովի անվան ուսանողական երիտասարդական ընկերության ակտիվ անդամ։ Նա ագիտացիոն մասսայական աշխատանք է տանում ոուս, լեհ, լատիշ բնակչության շրջանում, մասնակցում մենշևիկների դեմ կազմակերպված բանավեճերին, հաճախում քաղաքատնտեսության դասընթացներ, լսում Ռ. Լյուքսեմբուրգի դասախոսությունները։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հ. Լազյանը կապեր է հաստատում սոցիալ-դեմոկրատիայի ռադիկալների խմբի, ապա՝ «Սպարտակ» միության հետ և կատարում հեղափոխական աշխատանք[5]։

Հոկտեմբերյան հեղափոխության լուրը Հ. Լազյանն ստանում է Բեռլինում։ 1918 թ. սպարտակյանների օգնությամբ ռազմագերիների հետ վերադառնում է Հայրենիք և նույն թվականի փետրվարին հասնում է Բաքու։ Բաքվի կոմունայի ռազմահեղափոխական կոմիտեն նրան նշանակում է «Կավկազսկայա Կրասնայա Արմիա» թերթի պատասխանատու քարտուղար[6]։ Կոմունայի անկումից հետո Հ. Լազյանը տեղափոխվում է Աստրախան[7]։

Ցարիցինն ու Աստրախանը Սովետական Ռուսաստանին սննդամթերք և վառելիք մատակարարող միակ կետերն էին։ Այստեղ, Վոլգայի գետաբերանում, նրա միջին հոսանքի ափերին որոշվում էր սովետական հանրապետության բախտը։ Անտանտի իմպերիալիստները Կոլչակի, Կրասնովի և Դենիկինի սպիտակգվարդիական բանակների միջոցով փորձում էին սովետական իշխանությունը խեղդել հենց այս շրջանում։ Բոլշևիկների կուսակցության Կենտկոմը Վոլգայի ստորին հոսանքներում Անտանտի և սպիտակ գվարդիականների պլանները ձախողելու պատասխանատու կազմակերպիչ ու ղեկավար էր նշանակել ականավոր լենինյան Ս. Մ. Կիրովին։

---

3 Տե՛ս նույն տեղում, թ. 18, էջ 1։

4 Տե՛ս Ա. Վարդանյան, «Բոլշևիկյան Դանկոն» («Լենինյան ուղիով», 1961, № 2, էջ 87)։

5 Կիրովականի թանգարան, թ. 18, էջ 1։

6 Նույն տեղում, թ. 17, էջ 6։

7 Ա. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 87։

Վոլգայի գետաբերանը պաշտպանում էր 11-րդ կարմիր բանակը, որին և որպես քաղաշխատող զինվորագրվում է Հ. Լազյանը։ Այստեղ նա հիմնադրում և խմբագրում է «Կրասնի վոին» օրաթերթը[8]։ Թերթի պատասխանատու քարտուղարն էր Գոհար Թարմանյանը (որի հետ Հ. Լազյանը 1919 թ. ամուսնանում է)։ Թերթը խմբագրելուց բացի, 1918—1920 թթ. Հ. Լազյանը ղեկավար աշխատանքներ է կատարում Աստրախանի նահանգային կուսակցական կոմիտեում, նախ որպես նահանգային կոմիտեի անդամ, ապա՝ նախագահ։ Նա միաժամանակ նավաստիական համալսարանում և հրամանատարական կուրսերում քաղաքատնտեսության հարցերի շուրջ կարդում է դասախոսություններ։ 1919 թ. նահանգային կուսակցական կոնֆերանսը Հ. Լազյանին ընտրում է ՌԿ(բ)Կ VIII համագումարի պատգամավոր[9]։

Անտանտի երրորդ արշավանքի ժամանակ Հ. Լազյանը Բաքվից (ուր նա սովետի և նրա գործադիր կոմիտեի անդամ էր) որպես կամավոր մեկնում է Արևմտյան ռազմաճակատ, նշանակվում բանակի հրամանատարի և հեղկոմի նախագահի տեղակալ և հիմնադրում ու խմբագրում 4-րդ բանակի «Կրասնի սալդաթ» թերթը[10]։

Հ. Լազյանը ամբողջ լեհական ճակատամերձ գոտում կազմակերպում է հեղկոմներ, որոնք նպաստում են ինտերվենտների ջախջախմանը, ժողովներում և միտինգներում մերկացնում է սովետների ու բոլշևիկների հասցեին ծնվող ամեն մի հերյուրանք, ինտերվենտների դեմ մղվող պայքարում համախմբում աշխատավորներին։

Հ. Լազյանը 1920 թ. աշնանը մեկնում է Բաքու և նորից զինվորագրվում 11-րդ կարմիր բանակին, ընտրվում է Ադրբեջանի կոմունիստական կուսակցության II համագումարի պատգամավոր։ Բաքվում եղած ժամանակաշրջանում Հ. Լազյանը խմբագրում է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի օրգան «Իզվեստիա» թերթը[11]։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Հ. Լազյանը նշանակվում է Դիլիջանի արտակարգ կոմիսար։ Այնուհետև կանչվում է Երևան և Հայաստանի Հեղկոմի հանձնարարությամբ կազմակերպում հայկական կարմիր բանակի քաղբաժին։ Այդ մասին Հեղկոմի ռազմական ժողկոմի հրամանում կարդում ենք՝ «Հայտարարում եմ ի ղեկավարություն, որ սույն թվականից հիմնվում է ՀՍԽՀ կարմիր բանակի քաղաքական վարչություն, քաղաքական վարչության վարիչ նշանակվում է ընկեր Հ. Լազյանը»[12]։

Որոշ ժամանակ անց՝ Հ. Լազյանը նշանակվում է Հայաստանի ռազմական ժողկոմի տեղակալ[13]։

Այդ ժամանակ Լոռվա «չեզոք գոտու»[14] գյուղացիությունը կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ պատրաստվում էր ապստամբության։

---

8 Տե՛ս Կիրովականի թանգարան, թ. 17, էջ 6։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում։

12 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960, էջ 424։

13 Տե՛ս Կիրովականի թանգարան, թ. 17, էջ 7։

14 Անգլո-ֆրանսա-ամերիկյան իմպերիալիստների հրահրմամբ 1918 թ. վերջերին պատերազմ ծագեց դաշնակցական Հայաստանի և մենշևիկյան Վրաստանի միջև։ Անտանտի կառա-

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հայաստանի Հեղկոմը «չեզոք գոտու» գյուղացիության ապստամբության պատասխանատու կազմակերպիչ ու ղեկավար են նշանակում Հ. Լազյանին։ 1920 թ. դեկտեմբերի վերջերին նա ժամանում է Ղարաբիլիսա։ Հ. Լազյանի մարտական ուղու ամենափառավոր էջն է Լոռվա «չեզոք գոտու» գյուղացիական ապստամբության հաղթանակի կազմակերպումն ու ղեկավարումը։

Ղարաքիլիսայի գավառային Հեղկոմի հետ Հ. Լազյանն անմիջապես կազմակերպում է ապստամբական շտաբ, որը գործում էր գաղտնի՝ դասալքության դեմ պայքարի անվան տակ։

Հ. Լազյանը Ղարաքիլիսայից առաջին հերթին վտարում է մենշևիկյան լրտեսներին, երկաթուղային կայարանի միլիցիան մաքրում անհուսալի ծառայողներից։ Նա այնուհետև ձեռնամուխ է լինում ապստամբության նախապատրաստմանը։ Լոռվա գյուղացիներին օգնություն ցույց տալու նպատակով կազմակերպում է զինվորական ջոկատներ, որոնցից մեկին տրվում է «Ղարաքիլիսայի պարեկային գումարտակ» անունը։

Շուտով հայտնի է դառնում, որ մենշևիկները ականապատել են Զամանլուի երկաթուղային կամուրջը։ Հ. Լազյանի անմիջական նախաձեռնությամբ կամրջի շրջանում, Նահալի երկաթուղային կայարանում Արտաշես Ստեփանյանի ղեկավարությամբ կազմակերպվում է գաղտնի կենտրոն։

Հ. Լազյանի հաջորդ կարևորագույն խնդիրը դառնում է Լոռվա գյուղերում ընդհատակյա կազմակերպություններ ստեղծելն ու զինելը։ Նրան հաջողվում է սերտ կապեր հաստատել անլեգալ կուսբջիջների ու պարտիզանական ջոկատների հետ, կազմակերպել նորերը, զենք տեղափոխել։

Նա «չեզոք գոտու» հայ, ռուս, հույն, ադրբեջանցի բնակչության մեջ ծավալում է ինտերնացիոնալ պրոպագանդա, կազմակերպում համատեղ գործող ջոկատներ, աշխատանքի մեջ ընդգրկում բազմաթիվ վրացի զինվորների։

Հ. Լազյանի խնդրանքով Ս. Օրջոնիկիձեն ցուցում է տալիս կարմիր բանակի հրամանատարությանը Լոռվա ապստամբներին օգնելու համար։ 1921 թ. փետրվարի սկզբներին Ղարաքիլիսայում 11-րդ կարմիր բանակի հրամանատար Գեկկերի և ռազմահեղափոխական խորհրդի անդամ Վեսնիկի հետ Հ. Լալյանը մշակում է ռազմական գործողությունների և կարմիր բանակի օգնության պլանները։

1921 թ. փետրվարի 7-ին Հ. Լազյանի ղեկավարությամբ կազմակերպվում է Լոռվա ռազմահեղափոխական կոմիտե, որի նախագահն էր Գրիշա Առուստամյանը, իսկ անդամները՝ Ս. Էվոյանը, Ս. Սարգսյանը և այլք[15]։

Զինված ապստամբությունն սկսելու նախօրյակին Հ. Լազյանը զեկուցում է ռազմական ժողկոմ Ա. Նուրիջանյանին, որ ապստամբության նախապատրաստական աշխատանքներն ավարտված են և որոշված է սկսելու ժամկետը։

վարական շրջանները «հաշտեցրին» պատերազմող կողմերին և Լոռին 1919 թ. սկզբներին հայտարարեցին «չեզոք գոտի», որի կառավարիչ նշանակվեց սկզբում անգլիական, ապա ամերիկյան կոմիսար։ 1920 թ. աշնանը, Թուրքական նոր ասպատակությունների օրերին Հայաստանի ամերիկյան կառավարիչները մեկնեցին Թիֆլիս և դաշնակցական կառավարության համաձայնությամբ «չեզոք գոտին» հանձնեցին մենշևիկյան Վրաստանին։

15 Գ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղած պայքարում, Երևան, 1955, էջ 446։

Այնուհետև մարտական հրամաններ է տալիս տեղամասերի հրամանատարներին։ Դրանցից մեկում կարդում ենք. «Հրամայում եմ Ձեզ փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերվա ժամը 2-ին զինաթափել չեզոք գոտում գտնվող վրացական զինվորական մասերը և գրավել Խոշորի գիծը, Սուրբ-Սարգիս սարը... Ձեզանից աշ գործելու են Ղազախի և Շնողի պարտիզանները, որոնց առաջարկված է գրավել Արմիս—Ճոճկան—Բրդաձոր գիծը Փամբակաձորը փակելու և թշնամու կողմից ապստամբական շրջանները ներխուժելու հնարավոր փորձերը ձախողելու նպատակով։ Ձեր խնդիրը կատարելու համար տրամադրվում է 400 հետիոտն զինվոր, որոնցից 150-ը կամուրջը փրկելու համար։ Ապստամբական շտաբը և ընդհանուր ռեզերվները կգտնվեն Քոլագիրան կայարանում»[16]։ Ապստամբությունն սկսվում է նշված ժամկետին։

11-րդ կարմիր բանակի օգնությամբ Հ. Լազյանի ղեկավարած պարտիզանական ջոկատները 2—3 օրվա ընթացքում «չեզոք գոտին» մաքրում են մենշևիկյան զավթիչներից։

Լոռում և Բորչալուում հաստատվում են սովետական կարգեր։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի և ամրապնդման համար մղված պայքարի տարեգրության պայծառ էջերից մեկը դարձավ Լոռվա գյուղացիության հաղթանակը։ Հ. Լազյանի ղեկավարությամբ կոչ է հրապարակվում՝ ուղղված Վրաստանի աշխատավորներին, որտեղ ասվում է, որ վրացի հարյուրավոր ազնիվ զինվորներ միացել են ապստամբներին և զենքն ուղղել ատելի մենշևիկների դեմ[17]։

Ապստամբության հաղթանակից անմիջապես հետո Հ. Լազյանի ղեկավարությամբ կազմակերպվում է Լոռվա ինտերնացիոնալ գունդ, որն օգնության է հասնում փետրվարի 16-ին ապստամբության դրոշ պարզած Վրաստանի աշխատավորներին։ 1921 թ. փետրվարի 25-ին 11-րդ կարմիր բանակի զորամասերի օգնությամբ Վրաստանում հաստատվում են սովետական կարգեր։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Հ. Լազյանի անձնուրաց ծառայությունը «չեզոք գոտու» ապստամբության հաղթանակը կազմակերպելու ու ղեկավարելու գործում և պարգևատրել նրան «Կարմիր դրոշի» շքանշանով։

Վրաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո Հ. Լազյանը նշանակվում է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի ներկայացուցիչ Վրաստանում և ծավալում ագիտացիոն մասսայական աշխատանք հայ և վրաց ժողովուրդների եղբայրական կապերն ամրապնդելու, տնտեսական և քաղաքական համագործակցություն հաստատելու ուղղությամբ։

1921 թ. մարտին Լոռվա պարտիզանական ջոկատներից կազմվում է 4-րդ գունդ, որը կարմիր բանակի մյուս զորամասերի հետ միասին ուղարկվում է Զանգեզուր՝ դաշնակցական արկածախնդրությունը ջախջախելու[18]։ Գնդի հրամանատար է նշանակվում Հ. Լազյանը, որը հիմնադրում է «Կարմիր Զինվոր» թերթը։

---

16 Տե՛ս Կիրովականի թանգարան, թ. 9։

17 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 481։

18 С. Карапетян, Коммунистическая партия в борьбе за победу октябрьской революции в Армении, Ереван, 1959, стр. 398.

Դաշնակցական արկածախնդրությունը ճնշելուց հետո, Հ. Լազյանը նշանակվում է Հայկական դիվիզիայի քաղբաժնի պետ։

1922 թ. Լազյանը ուղարկվում է Մոսկվա՝ Մարքսիզմի դասընթացներում սովորելու։ Կովկասյան բյուրոյի քարտուղար Նազարեթյանի՝ ՌԿ(բ)Կ ԿԿ-ին հասցեագրված դրության մեջ Հ. Լազյանի մասին ասված է. «Նրա դասախոսությունները, ճառերն ու հոդվածները կարմիր բանակայինների և աշխատավորների կողմից ընդունվում էին մեծ հիացմունքով ու հաջողությամբ։ Ամենուրեք, ուր նրան կուսակցությունը ուղարկել է, ցուցաբերել է եռանդ, հմտություն, հերոսական համարձակություն և պրոլետարական հեղափոխությանը կոմունիստաբար նվիրվածություն»[19]։ Քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակից Ա. Վարդանյանի վկայությամբ, Հ. Լազյանը ղդայուն ընկեր էր, հոգատար կոմիսար։ «Կարմիր բանակայինները գիտեին,— գրում է նա,— որ, եթե նա ինքնազոհության կոչ է անում, ապա ինքը առաջինը պատրաստ է զոհվելու ժողովրդի բարօրության, կոմունիստական գաղափարների հաղթանակի համար»[20]։

Հեղափոխական ընդհատակում, քաղաքացիական կռիվներում, խաղաղ շինարարական աշխատանքներում միշտ ավանգարդում ընթացող Հ. Լազյանն ուսման մեջ նույնպես առաջավորների շարքերում էր։ Սովորելու ժամանակ նա կատարել է կուսակցական-մասսայական աշխատանք։ Նշված դասընթացներն ավարտելուց հետո 1923—1930 թթ. նա մի շարք պատասխանատու աշխատանքներ է կատարել Մոսկվայի կուսակցական կազմակերպություններում։

1930 թ. աշնանը ՀամԿ(բ)Կ ԿԿ Հ. Լազյանին ուղարկում է «Կարմիր պրոֆեսուրա», ուր նա սովորում է միջազգային քաղաքականության և միջազգային էկոնոմիկայի ինստիտուտում։ Պրոֆեսուրան ավարտելուց հետո Հ. Լազյանը մեկնում է Լոնդոն՝ տնտեսական և դիվանագիտական աշխատանքի։

1934—1937 թթ. նա աշխատում է Լոնդոնի ՍՍՀՄ առևտրական ներկայացուցչությունում, որպես տնտեսագետ։ Նա միաժամանակ ՏԱՍՍ-ի թղթակից էր և սովետական բոլոր հիմնարկների միացյալ կուսկազմակերպության քարտուղար։

1937 թ. մարտին Հ. Լազյանը վերադառնում է Մոսկվա և նշանակվում ՌՍՖՍՀ լուսժողկոմատի ուսումնա-մանկավարժական բաժնի վարիչ։ Հ. Լազյանը մինչև իր կյանքի վերջը (1943 թ.) հավատարիմ մնաց լենինյան գաղափարներին։

Հ. Լազյանի կյանքն ու հեղափոխական գործունեությունը մարքս-լենինյան գաղափարներին, սոցիալիստական հայրենիքին անսահմանորեն նվիրվածության և երիտասարդության կոմունիստական դաստիարակության համար փայլուն օրինակ է։

---

19 Կիրովականի թանգարան, թ. 19։

20 Ա. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 89։

ИОСИФ ЛАЗЬЯН

Г. А. ОГАНЯН

Резюме

В 1907 г. Лазьян И. Г. вступил в ряды РСДРП и стал одним из организаторов большевистской группы в Ахалцихе. После демобилизации из рядов царской армии в 1912 г., вплоть до Октябрьской революции в Риге, а затем в Берлине, он умело сочетал свою профессию полиграфиста с активной подпольной революционной деятельностью.

Важное место в многогранной революционной деятельности Лазьяна занимает организация и руководство борьбой лорийских крестьян за победу Советской власти.

Всюду — в борьбе за Советскую власть, в армии, в московских парторганизациях, в советском посольстве в Лондоне,— где работал Лазьян, всегда он оставался непоколебимым ленинцем. Вся его жизнь и деятельность—яркий образец пролетарского интернационализма и советского патриотизма, лучший пример для коммунистического воспитания подрастающего поколения.